

արդ. ելսյին view — 2024|2025

ԱՐԵՒ ՄՏԱՅԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՆՊԱՍՏԻ ԾՐԱԳԻՐ

Գալուստ Կիլյաէնկեան Հիմնարկութիւն
Հայկական Համայնքներու Բաժանմունք

● ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ
2. ՆՊԱՏԱԿՆԵՐ
3. ԴԻՄԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇԵՐ
4. ԳՆԱՅԱՏՈՒ ՄԻ ՉԱՓԱՆԻՇԵՐ
5. ԳՆԱՅԱՏՈՒ ՄԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
6. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ
7. ՆՊԱՍՏՆԵՐՈՒ ՆԱԽԱՅԱՇԻՒ
8. ԴԻՄՈՒ ՄԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

● ՆԵՐԱԾԱԿԱՆ

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքը (այսուհետ՝ ԳԿՀ) կը մեկնարկէ «արդ եւս» մշակութային նպաստի ծրագիրին չորրորդ շրջանը. անոր նպատակն է ամրապնդել լեզուի եւ մշակոյթի միջեւ հարազատ կապը, եւ ստեղծել նախադրեալներ որ արեւմտահայերէն լեզուն եւ մշակոյթը հարստանան ու զարգանան: Այս առաջատար ծրագիրին միջոցով Բաժանմունքը պիտի շարունակէ աջակցիլ հայերէնով ժամանակակից մշակոյթ եւ մտածողութիւն ստեղծող նախաձեռնութիւններուն:

արդ եւս-ի նպատակն է ոգեշնչել, նպաստել եւ աջակցիլ մշակութային եւ ստեղծագործական ոլորտներու նորարարութեան եւ ժամանակակցութեան՝ ապահովելու արեւմտահայ լեզուին ու մշակոյթին կենսունակութիւնը, որ սերտօրէն կապուած է նաեւ եկող սերունդներու կենսունակութեան: Որպէս ընկերային վերափոխումի գործիք, մշակոյթը կ'առնէ կեդրոնական դիրք մը: Այս առումով, արդ եւս կ'աջակցի նաեւ մշակութային մեր իրականութեան մէջ իսկական փոփոխութիւն բերող ազդու գործիչներու, եւ կը կը ձգտի ներշնչելու մարդիկ եւ համայնքներ, որպէսզի անոնք փորձընկալեն, վերաիմաստաւորեն եւ տարածեն մշակոյթ մը՝ թարմ գաղափարներու մշակումով եւ կիրարկումով. գաղափարներ որոնք կը մղեն պատկերացնելու արեւմտահայերէնի եւ արեւմտահայ մշակոյթի կենսունակ ապագան:

Հիմնարկութիւնը պիտի հովանաւորէ տարեկան մինչեւ տասը ծրագիր՝ իւրաքանչիւրին համար առաւելագոյնը 10,000 Եւրօ նպաստով:

● ՆՊԱՏԱԿՆԵՐ

արդ եւս ծրագիրը անհատներու եւ խմբակներու առիթ կու տայ արեւմտահայերէնով ստեղծելու մշակութային զանազան արտադրութիւններ: Մշակութային արտադրութիւն կը նշանակէ որեւէ կիրարկութիւն, արտայայտութիւն, ներկայացում, գիտելիք, ձիրք, ինչպէս նաեւ որեւէ գործիք, միջոց, եւ «տարածութիւն» ուր լեզուն կարելորագոյն գործօնն է:

Այս պարունակին մէջ, մշակոյթ եզրը գործածուած է իր լայն իմաստով եւ կը ներգրաւէ արուեստի բոլոր բնագաւառներն ու դրսեւորումները, յատկապէս կեդրոնանալով ստեղծագործութեան եւ ժամանակակցութեան գործօններուն վրայ: 21-րդ դարուն յարիւր եւ առընչելի մշակութային արտադրութիւնը անհրաժեշտ է համայնքային թարմացումին եւ անոր զարգացումին համար:

արդ եւս ծրագիրին առաջնահերթութիւններն են.

- Արժեւորել արեւմտահայերէնով ստեղծագործելը:
- Չօրացնել լեզուի ու մշակոյթի միջեւ հարազատ կապը, ապահովելու երկուքին զարգացումը:
- Շեշտել մշակոյթի յարակցական ուժն ու կարողականութիւնը:
- Խթանել մշակութային գործունէութիւնը եւ մասնակցութիւնը, որպէս հզօրացումի եւ մշակութային հնարաւորութիւններու գործածութեան կարելոր միջոց, եւ որպէս զարգացումի աղբիւրներու փոխանցումի, ստեղծումի եւ բարեշրջումի կարելոր գործօն:
- Շեշտել մշակոյթի հսկայական կարողականութիւնը եւ ուժը՝ հասարակութիւնը փոխակերպելու եւ անոր վրայ ազդելու:
- Մշակութային հնարաւորութիւններու կայուն եւ յարատեւ ստեղծումին եւ անոնց գործածութեան միջոցով խթանել զարգացումի ուղղութիւններ, անոնց նորացումը եւ փոխանցումը ապագայ սերունդներուն:
- Զաջալերել ժամանակի ընթացքին զարգացող եւ երկարաժամկետ կիրարկութիւններ, որոնք պիտի երաշխաւորեն արեւմտահայ մշակոյթի կենսունակութիւնը:

- Չարգացնել նորարար մշակութային կիրարկություններու ցանց մը՝ ապահովելու անոնց տեսանելիությունը հայկական աշխարհին մեջ:
- Չօրաշարժել մշակոյթը եւ հայկական ձայներու բազմազանությունը՝ ապահովելու անելի՛ զգալի ներկայություն:
- Ստեղծել բաց միջավայր, ուր բոլորը կրնան մշակոյթ ստեղծելու եւ պահպանելու գործընթացին մասնակցիլ եւ անոր պատասխանատուութիւնը կրել՝ խրախուսելով ստեղծագործութիւնը եւ ներարարութիւնը:
- Անդրադառնալ համամարդկային հիմնահարցերու եւ կապեր հաստատել այլ մշակոյթներու հետ՝ արեւմտահայերէնի միջոցով:
- Ապահովել տարբեր սեռերու մասնակցութեան հաւասարությունը:
- Ապահովել երիտասարդներու մասնակցութիւնը հասարակաց մշակութային շրջարկին եւ ինքնութեան ձեւաւորման մեջ:
- Ապահովել հայկական տարբեր համայնքներու կենսունակութիւնը մշակոյթի միջոցով:
- Գործածել մշակոյթին ուժը լեզուն եւ նոյնիսկ մշակոյթը թարմացնելու համար՝ օգտագործելով մշակոյթը որպէս զարգացումի եւ առաջընթացի շարժիչ ուժ, որպէս իմաստի եւ կենսունակութեան աղբիւր, որպէս ստեղծագործութեան եւ նորարարութեան աղբիւր, եւ որպէս տեղական եւ միջազգային մարտահրաւերներ դիմագրաւելու եւ լուծումներ գտնելու աղբիւր:

● ԴԻՄԵՆՈՒ ԶԱՓԱՆԻՇԵՐ

Այս նպաստի դիմումագիրը բաց է բոլոր անոնց որոնք փափաքին արեւմտահայերէնով մշակութային նիւթեր արտադրել՝ Սփիւռքէն եւ Հայաստանէն:

Դիմումները կրնան կատարուիլ անհատական կամ խմբային, ինչպէս նաեւ ոչ-շահութաբեր կազմակերպություններու կողմէ: Տասնըութ տարեկանէն վեր բոլորը կրնան դիմել, բացի շահոյթ հետապնդող կազմակերպություններէ: Պարտադիր չէ որ դիմողները ըլլան կայացած կամ փորձառու արուեստագետներ:

Ծրագիրները կրնան ըլլալ բազմա/միջգիտակարգային, օրինակ՝

- Արուեստի տարբեր բնագաւառներ, ժառանգութիւն (որպէս ներշնչումի աղբիւր), եւ մարդաբանական գիտություններ:
- Գաղափարներ, փորձառութիւններ, եւ տարբեր զգացումներ արտայայտելու ստեղծագործական դրսեւորումներ, որոնք կրնան ներառել հետեւեալ ձեւաչափերը, բայց չեն սահմանափակուիլ անոնցմով՝
 - Տեսողական արուեստներ:
 - Գրականութիւն, գրաքննադատութիւն, վերլուծական յօդուածներ, թարգմանություններ (գիրք, ձայնագիրք, թերթ, ամսագիր, կայքէջ, առցանց հրատարակություններ, շարանկար...):
 - Բազմա/միջգիտակարգային բնագաւառներ, որոնք գոյացած են արդի հաղորդակցութեան ձեւերու շնորհիւ:
 - Նոր երաժշտութիւն:
 - Թատրոն, կատարողական արուեստներ:
 - Տեսանիւթեր եւ այլ արտայայտչամիջոցներ՝ կահոնքներ (installations), animations, blogs, vlogs, YouTube-ի կայաններ, ձայնային ծրագիրներ (podcasts), յաւելումներ եւ այլն:
 - Ձայնասփիւռի յայտագիրներ եւ այլ ստեղծագործ եւ առցանց հեռարձակումներ:

Դիմում ներկայացնելէ առաջ, դիմորդներէն կը խնդրուի ուսումնասիրել հետեւեալ էջերը ուր նշուած են նախորդ տարիներու նպաստառուներուն նախագիծերը՝ վաւեր նախագիծերու մասին անելի լաւ պատկերացում կազմելու համար.

[2022-ի նպաստառուներ](#)

[2023-ի նպաստառուներ](#)

[2024-ի նպաստառուներ](#)

● ԳՆԱՅԱՏՈՒՄԻ ՉԱՓԱՆԻՇԵՐ

արդ եւս նպաստի դիմումները պիտի գնահատուին հետեւեալ չափանիշերու հիման վրայ՝

- Ստեղծագործ եւ նորարար տարրերու եւ մտքերու առկայութիւն:
- Նիւթերու առընչելիութիւն:
- Մշակութային բազմազանութիւն, ժամանակակից եւ աշխարհին հետ առնչուող նիւթերու անդրադարձ:
- Նորարարութիւն արեւմտահայերէնի գործածութեան մէջ:
- Աշխատանքի եւ բովանդակութեան որակ:
- Յառաջադէմ մօտեցումներու որդեգրում:
- Մշակութային արտադրութիւն որ ձեւաւորուած ըլլայ տարբեր արտայայտչամիջոցներով եւ աւանդութիւններով, որոնք պարունակեն նոր գիտելիքներ եւ կիրարկութիւններ:
- Ժամանակակից արտայայտչամիջոցներու գործածութիւն:
- Լեզուի գործածութիւն որպէս արտայայտութեան հիմնական միջոց:

Յատուկ ուշադրութիւն պիտի դարձուի ծրագիրներու, որոնք՝

- Դիմագրաւեն մարտահրաւերներ մշակոյթի եւ արուեստի բնագաւառներուն մէջ:
- Դիմեն յստակ լսարանի կամ թիրախի մը, ներառեալ աննկատ մնացած շրջանակները:
- Ներգրաւեն կիներն ու երիտասարդները:
- Շարունակեն ունենալ իրենց դրական ազդեցութիւնը ծրագրի աւարտէն ետք:
- Անդրադառնան բնապահպանական եւ կենսոլորտի հարցերու՝ երբ եւ եթէ հնարաւոր է:

Յանձնարարելի է որ դիմողները օգտուին այժմու միջազգային յաջող մշակութային գործունէութիւններէն, եւ փորձեն այդ օրինակները համարկել մեր հայկական իրականութիւններուն մէջ:

● ԳՆԱՅԱՏՈՒՄԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Ծրագիրներու գնահատումը պիտի կատարուի ԳԿԻ-ի կողմէ, մասնագէտներու խորհրդակցութեամբ: Արդիւնքները պիտի հրապարակուին դիմումի **վերջնաժամկետէն վեց շաբաթ ետք**:

● ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ

Այս նպաստի դիմումը բաց պիտի ըլլայ իւրաքանչիւր տարուայ աշնան:

- Դիմումներու վերջնաժամկետն է **28 փետրուար 2025-ը** (Լիզպոնի ժամով 23:59-ին):
- Արդիւնքները պիտի յայտարարուին 14 ապրիլ 2025-ին:

Յանձնարարելի է դիմումը վերջին օրուայ չձգել:

● ՆՊԱՍՏՆԵՐՈՒ ՆԱԽԱՅԱԾԻՒ

արդեւ ծրագիրը նպատակադրած է տարեկան մինչեւ տասը ծրագիր հովանաւորել: Ընդունուած ծրագիրներուն քանակը կախեալ պիտի ըլլայ նաեւ դիմումներու թիւէն ու որակէն: Իսկ ընդունուած ծրագիրներուն նպաստի գումարը կախեալ է ծրագիրէն, բայց գումարը չի կրնար գերազանցել 10,000 Եւրօն, եւ նպաստը կարելի չէ նորոգել: Նոյն դիմողը միայն մէկ նպաստ կրնայ ստանալ, իսկ անոնք որոնք չեն յաջողած, կրնան կրկին դիմել:

● ԴԻՄՈՒՄԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Բոլոր դիմումները պէտք է ըլլան առցանց, Հայկական Բաժանմունքի առցանց դիմումագիրի համակարգին միջոցով. դիմողներէն կը խնդրուի գրանցուիլ եւ իրենց անունով MyGulbenkian հաշիւ մը ստեղծել, որմէ ետք կարելի պիտի ըլլայ դիմումը ներկայացնել:

Դիմումը կարելի է կատարել հայերէնով, անգլերէնով եւ ֆրանսերէնով:

Դիմողներէն կը խնդրուի իրենց ծրագիրին վերաբերեալ մանրամասն նախահաշիւ ներկայացնել:

Յաւելեալ տեղեկութիւններ՝

- Նպաստառու ծրագիրները կրնան ներկայացուիլ ԳԿՀ-ի տարբեր ցանցերուն վրայ, ապահովելու անոնց տեսանելիութիւնը:
- Յաւելեալ տեղեկութիւններու եւ յստակացումներու համար գրել՝ carmenias@gulbenkian.pt հասցէին, իբր վերնագիր նշելով՝ **in view culture programme**:
- ԳԿՀ-ի ներկայ ինչպէս նաեւ այլ ծրագիրներու մասին կարդալու եւ տեղեկանալու համար այցելել՝ <https://gulbenkian.pt/armenian-communities/hy/> կայքէջը, բաժանորդագրուիլ լրատուին եւ հետեւիլ [Facebook](#)-ի պաշտօնական էջին:

Անձնական տուեալներու պաշտպանութիւն

(Եւրոպական օրէնսդրութիւնը կը պարտադրէ այս բաժինը ընդգրկել դիմումնագիրին մէջ)

Անձնական տուեալներու գործածութեան միակ նպատակը պիտի ըլլայ գնահատել տուեալ նպաստի դիմումի ծրագիրը (արդ եսլին view), որ պիտի կատարուի Գալուստ Կիւլպէնկեան Զիմարկութեան (այսուհետեւ՝ ԳԿԶ) կողմէ: ԳԿԶ-ն պիտի ըլլայ երկրորդ մարմինը որ պիտի ունենայ տուեալներու գործածութեան իրաւունք:

Որեւէ ժամանակ, անհատը կրնայ խնդրել որ իրեն տրուի իր անձնական տուեալներու գործածութեան վերաբերեալ տեղեկութիւններ՝ գրաւոր նամակ մը յղելով հետեւեալ իմակի հասցէին privacidade@gulbenkian.pt:

Անհատին անձնական տուեալները պիտի պահուին այնքան ժամանակ որքան պէտք է նպաստի դիմումնագիրը գնահատելու. բացի այն պարագաներէն երբ օրէնքը կը հաստատէ թէ այլ ժամկետներ պէտք է յարգուին: Որոշ տեղեկութիւններ (օրինակ՝ անուն, դիմումի թուական, նպաստի պայմաններ եւ ժամկետներ, ինչպէս նաեւ այլ անձնական տուեալներ որոնք առկայ են ծրագիրին աշխատանքներուն եւ կամ վերջնական հրատարակութիւններուն մէջ) ընդմիջտ պիտի պահուին ԳԿԶ-ի կողմէ, որպէսզի համատեղուին նմանատիպ տեղեկութիւններու հետ, իրենց համապատասխան մշակութային պարունակին մէջ:

Որեւէ ժամանակ, անհատը կրնայ խնդրել որ իր անձնական տուեալներու գործածութեան համար իր տուած հաւանութիւնը չեղեալ համարուի. ասիկա կարելի պիտի ըլլայ ընել առկայ օրէնսդրութեան համաձայն, եւ իր անդրադարձը պիտի չունենայ տուեալներու գործածութեան վրայ որ հիմնուած էր նախապէս տրուած հաւանութեան վրայ: Հաւանութեան չեղարկումը կը նշանակէ թէ ԳԿԶ-ն չի կրնար անձնական տուեալները գործածել այն նպատակով որուն գործածութեան շուրջ նախապէս հաւանութիւն ուներ. ասիկա իր հերթին կը նշանակէ թէ անհատին դիմումնագիրը այլեւս ի գործ չէ:

Առկայ օրէնսդրութեան համաձայն, տուեալներու գործածութեան հսկիչ մարմինը կ'երաշխաւորէ որ անհատը կարենայ իր տուեալներուն հասնիլ, կամ խնդրել որ իր անձնական տուեալները ստուգուին, սրբագրուին, կամ ջնջուին, ինչպէս նաեւ սահմանափակուին:

Տուեալներու գործածութեան հսկիչ մարմինը կ'երաշխաւորէ որ պէտք եղած ապահովական եւ ճշգրիտ միջոցները պիտի կիրարկուին անհատին անձնական տուեալներուն գործածութեան ժամանակ՝ թէ՛ այն պարագային երբ տուեալները գործածուին այս մարմինին կողմէ, թէ՛ ալ երբ անոնք գործածուին այլ մարմիններու կողմէ, որոնց հետ համաձայնութիւն կ'ընտան:

Տուեալ նպաստի դիմումնագիրը համակարգելու նպատակով, տուեալներու գործածութեան հսկիչ մարմինը կրնայ տուեալները գործածել ուղղակիօրէն եւ կամ գործակից մարմիններու միջոցով. այս վերջինս միայն կը պատահի այն պարագային երբ, ըստ օրէնքի, համապատասխան պայմանագիրներ կան այս գործակից մարմիններուն հետ:

Տուեալ նպաստի դիմումնագիրը համակարգելու ծիրին մէջ, ԳԿԶ-ն կրնայ անձնական տուեալները փոխանցել գործակից մարմիններու որպէսզի անոնք հրատարակուին եւ գործածուին կազմակերպութեան հաղորդակցութեան նկատառումներով: Այս գործակից մարմինները կրնան Եւրոպական Միութեան սահմաններուն մէջ գտնուիլ, կամ ըլլալ արտասահման. այս վերջինին պարագային, ըստ օրէնքի, համապատասխան ընթացակարգեր ի գործ պիտի դրուին տուեալներու պաշտպանութիւնը մշտապէս ապահովելու համար:

Անհատը կրնայ բողոքի հայց ներկայացնել Փորթուգալական Ազգային Իշխանութիւններուն ("Comissão Nacional de Proteção de Dados"), եթէ պատճառ մը ունի կարծելու թէ տուեալներու գործածութեան երկու հսկիչ մարմինները վերոնշեալ պայմանները չեն յարգած տուեալներու պաշտպանութեան մէջ: